

տեսնեմ այնքան բազմաթիւ ստեղծութեանց. ետես
և զքաղաքն բովանդակ ոռոգեալ վտակաւ դառն
ջուրց ապաշխարութեամբ. Վասն որոյ զառաւօտ
խաղաղութեան ծագեաց իրրեւ ի Նիմուէ:

Զօրացան սակաւաթիւ զօրքն խաչակրաց, ձե-
ւակամութիւն տնօրէնութեան մարտին նորոգե-
ցաւ: Լեւոն, որ կից է քաղաքին ի կողմանէ
արեւելից, Կարմիր սար ասացեալ ի բնակաց,
առաւ վերստին ի քաջաբազուկ զինուորութեանց
ռուսաց և հայոց, ուստի առաւել եւս յաջող ե-
ղև վանել զթշմամին:

Ի մին գիշերի մամառաւէս սաստիկ եղև մար-
տադրութիւն ընդդէմ աշտարակին, որ յստորին
լերինս Կարմիր սար կոչեցելոյ: Մարտիկ էին
հազարացիք. թշմամին պարտեալ մինչև ի սպառ
և վանեցաւ ո՛չ միայն ի մտից քաղաքին, այլ և
ի հանդիպոյ լերանց և ձորոց մինչև ցիսասարա-
կել աւուրցն: Ի թայագէտ արեւու եւս չէր տեսեալ
զայսպիսի սաստիկ մարտ պատերազմի:

Ի վախճանի թշմամին կորագլուխ դարձաւ ցմի-
ջիլ աւուրն օգնականութեամբ երկնից ի ձեռն
քաջագէմ զինուորութեանց խաչակրաց:

Ի սկսուածոյ մարտին ցվախճան եղևն ժամք

1. Սա այն Պօպով զօրավարն է, որ ամենագեղեցիկ
կարծիք ունէր հայերի անձնութեան և հաւատար-
մութեան մասին ղէպ ի ուսնեցել: Իր մէկ զեկուցման
մէջ Պասկելիէն՝ նա գրում էր.

«Գալով Հայոց՝ պէտք է ասեմ, որ նորա օրինակելի
էին, հոգւով նուիրուած են Ռուսներին և հնազանդ
են իշխանութեան»:

Աս այս Պասկելիէն զայրացած պատասխանեց.

«Բոլոր դաւաճան բայագէտի տաճիկներին բանտ-
արկեցէք, քրդերի ցեղապետներին՝ ձեռք մի՛ տաք,
որ չլինի թէ մեր ղէպ զրգուին նոցա քրդերը. իսկ
Հայոց անձնութեանը մի՛ հաւատաք, որովհետեւ
այդ առաջ է գալիս նոցա վախկոտութիւնը»:

* ՄԱՆ. ԽՄԲ. — Պասկելիէն, լեհացի, իր Մայր երկրին՝ Լեհաստանի համար մասնիչ և դաւաճան ճանչ-
ցուած է, վասն զի 1831ի ապստամբութեան ճնշումի զօրծին մէջ ինք ալ կարեւոր մաս մը
ունեցեր է:



ՏԵՍԻԼ Ս. ՍԱՀԱԿԱՅ ՊԱՐԹԵՒԻ

ՂԱԶԱՐ ՓԱՐՊԵՏԻՈՅՆ պատմութեան
նոր հրատարակութիւնը կը պատրաստենք,
բոլոր ձեռագիր և տպագիր օրինակներն
աչքի առջեւ ունենալով: Ս. Սահակայ
Տեսիլքը նախ, արարական շրջանին և
հետագայ ուրիշ ղէպերու բացայայտ ակն-
արկութեամբ, իւր խոշորագոյն կը կանգնի,
և իր հարազատութեան մասին կասկածիլ
կու տայ: «Բազմալէպ» թիւերուն մէջ՝
ձեռագրի մը տարբեր ընթերցումներով նոր
հրատարակութիւն մը պիտի տամ ուսու-
մասիրաց: Պիտի ընենմ հոս ստոր Սղ-
րիւնները, Ծագումը, Հին և Նոր ընա-
դատութիւնները, մեր կարծիքը, յօդուածիս
եզրակացութիւնը, և հուսկ՝ հրատարա-
կութեան համար ընտրած օրինակ, և
համեմատութեան գործածած ձեռագիրներս
ու տպագիրներ:

Փարպեցւոյն Ա. զրուագը՝ Ս. Սահակայ
վերագրուած կանխագուշակութեամբ մը կը
վերջանայ: Առանց աստուածաբանական
այդ ընդարձակ հատուածին՝ պատմութեան
կապն աւելի սերտ և աւելի տրամաբա-
նական կը մնար: Տեսնենք նախ ստոր

ԱՂԲԻԻՐՆԵՐԸ. — Ս. Գրքի լեզուն և
ոճին ընդել ականջը՝ իսկոյն կը լսէ և կը
ճանչնայ այդ Տեսլեան մէջ Եսայեայ, Զա-
քարիայի, Դանիէլի, Եզեկիէլի և Յովհան-
նու Յայտնութեան գրքին ձայնը: «Տե-
սիլ... Սահակայ Պարթեւի զոր ետես...
յորժամ նստէր ի սուրբ եկեղեցւոյն» եւն.
համեմատելի՝ Եսայի Ա, 1 «Տեսիլ Եսա-
յեայ որդւոյ Ամովսայ» զոր ետես ի վերայ
Հրէաստանի. նոյնպէս հմտ. Եզեկիէլ Ա,
1 «Տեսիլ Եզեկիէլի քահանայի որդւոյ
Բուզայ, զոր ետես յերկրին Քաղգէացւոց՝
ի վերայ Քորար գետոյ»: Մարգարէական
արտաքին վեհութիւնը՝ Եզեկիէլի վրայէն
ձեւուած է, (հմտ. գլ. Ա, 1-22): Տե-

սիլքներու զանազանութիւնը՝ Դանիէլէն
օրինակուած է, (տ. գլ. Է-Թ), իսկ խոր-
հրդաւոր և ուշադրութիւնը գրաւող կեր-
պը՝ Յայտնութեան՝ գրքէն շինուած է,
(գլ. Գ, եւն.): Հուսկ, մեծ դեր ունի այս
տեսիլքին վերջնական խմբագրութեան մէջ
Լուսաւորչի տեսիլքը, (տ. Ազաթանգեղոս
ձԲ-ձԳ): Պարզապէս ընթերցողին տաղա-
կալի չըլլալու համար՝ զանց կ'ընենմ տե-
սիլքին իւրաքանչիւր նախագասութիւնը՝
և մարգարէութեանց հետ ունեցած մէն մի
բառական նմանութիւնը նշանակելով: Բա-
ռերու ընտրութիւնը, «Աթոռ», «Սեղան»,
«Գունդ», «Ամպ», «Լոյս», և ուրիշ մար-
գարէական բացատրութիւններն իրենց ըզ-
գալի ու ցայտուն երեւոյթներով, յիշեալ
հեղինակներէն ցիր ու ցան քաղեր է:

Սյդ մարգարէութեան իւր նիւթ առած
է Արշակունի և Պահլաւ կրկնակ զահուց
անկումը, հայ ազգիս նեղութիւնն ու հա-
լածանքը անհաւատից կողմէն, և ապա
թէ այդ երկու զահերը վերստին պիտի
կանգնին: Նպատակն է ցուցնել, թէ՛ Ս.
Սահակ մարգարէական հոգւով գուշակած
էր Անապատեւ գալիք պատուհաս մը և
Հայ ազգին տառապանքները: Համեմա-
տելով կը տեսնենք որ Տեսիլքը բառ առ
բառ Ս. Գրքի կաղապարէն ելած է:

ԾԱԳՈՒՄԸ. — Հիմա գայն Ղազար
Փարպեցւոյն պատմութեան անբաժան կը
գտնենք, սակայն միշտ այնպէս եղած էէ:
Եթեքերորդ դարուն, գրեթէ անուամբ միայն
ծանօթ՝ Գրիգոր Սարկաւազապետ մը կը

1. Որուն զէթ յունարէնն անշուշտ ծանօթ էր տե-
սիլքի հեղինակին:

2. Հրատարակութեան ընթացքին՝ Ազաթանգեղոսի
հետ միայն քանի մը համեմատութիւններ յիշատակած
եմ:

ԲԱԶՄ. ԴԵԿՏԵՄԲԵՐ 1931

յիշուի մեր մատենագրութեան մէջ. ասոր ներքողեան գրութեան մը՝ կցուած է Հայ կաթողիկոսաց և գլխաւոր իշխանաց ցանկ մը, որ այժմ միայն յունարէն¹ լեզուով կը գտնուի: Որովհետեւ եօթներորդ դարուն անձանց և անցից յիշատակութեամբ կ'աւարտի այդ ցանկը, կը հետեւցնեն բանասէրք, թէ՛ գրութիւնը և յոյն թարգմանութիւնն ալ՝ նոյն դարուն պէտք է եղած ըլլայ, է դարէն մինչեւ Ը⁶ սկիզբը (704) և ոչ Զ դարուն ինչպէս ոմանք² կարծեցին:

Որքան տարտամ է հեղինակին և թարգմանչին անձն ու ժամանակն ստուգել, նոյնքան ալ որոշ է և աներկբայ, թէ՛ ուղղակի հայերէնէ թարգմանուած է այն: Մէջը կը գտնենք քանի մը բառեր որ իրենց հայկական ձեւովն ու հնչմամբ պահուած են. այսպէս, օր. համար կը գրէ Βραμ Σαπώ (= Վաւապուհ), Ευανέσης = Յովհաննէս, Τορούσης = Թէոդորոս, փոխանակ գրելու Ἰωάννης, Θεόδωρος, և վերջապէս՝ οἱ Ἀξάτοι τῶν Ἀρμενίων, ըսել ուզելով «Աղստք Հայոց»: Այսչափը կարծեմ բաւական է գրութեան հայ ծագումը ցոյց տալու համար:

Բայց մեզի աւելի հետաքրքրական այն է՝ որ առաջին անգամ այդ յունարէն հատուածին մէջն է որ Ս. Սահակայ տեսիլքին կը հանդիպինք՝ գրեթէ Մ. Խորենացւոյն բառերով. սակայն՝ ոչ թէ յոյնը ասկէ առեր է այդ տեղեկութիւնը, այլ սոյն յունական թարգմանութենէն՝ մտեր է նաեւ Քերթողահօր պատմութեան մէջ, ինչպէս կը ցուցնեն Հին և Նոր

ՔՆՆԱՒԱՏՈՒԹԻՒՆՔ. — Նախ Կորին՝ որ իր երկու վարդապետաց մահուան պարագաները բաւական մանրամասնութեամբ կը նկարագրէ, ակնարկ մը չունի Տեսլեան նկատմամբ: Կը յիշատակէ Սահակայ վախճանէն առաջ՝ Հիւանդաց Օծումը և Մեսրովպայ վրայ լուսեղէն խաչի մը ծագումը: Եթէ մարգարէական գուշակութիւն մ'ըրած ըլլար Սահակ՝ կամ թէ այսպիսի համբաւ մ'իսկ լսած ըլլար Կորին, բնաւ

կը լռէր. պիտի գրէր զայն ի պարծանա իւր պաշտելի վարդապետին: Տեսիլքն ուրեմն բոլորովին անձանօթ է Կորեան:

Մովսէս Խորենացին որ Ս. Սահակայ և Մեսրովպայ մասին այնքան մանրամասն տեղեկութիւններ տուած է, եթէ իր օրով Սահակայ անուամբ այսպիսի բան մը գիտնար, բնաւ կը լռէր, եւ կամ այնքան ուշտ կ'ըլլար զայն անցողակի 3-4 տողով յիշատակելու: Հմմտ. Մ. Խոր. Գ. 66, էջ 565:

Նոյնպէս, թէ որ Խորենացւոյն այսպիսի տեսիլք մը ծանօթ ըլլար, անկէ էջ մ'առաջ, Ս. Սահակայ կողմանէն՝ Սուրբ Պահլաւին սա խօսքն ըսել չէր տար. «Մինչեւ Աստուած քաղցրասցի դարձուցանել ի կարգ հայրենի ընդ ձեռն որոյ և ե քաղաւորի». հմմտ. Մ. Խոր. Գ. 65: Ապագային տեղեակ մէկն՝ աւելի ստոյգ ոճ մը պիտի գործածէր:

Այսպէս ուրեմն, կը տեսնենք թէ տեսիլքի մասին կասկածելու բաւական պատճառ կայ: Եւ իրօք. արդէն

ՆԱԽՆԵՍՅՈՒՆՔ մէջ Ս. Ներսէս Լամբրոնացին առաջինը կ'ըլլայ տեսլեան հարազատութիւնը մերժելուն մէջ. «Տեսիլն այն ոչ հաստատի առ մեզ գոլ Ս. Սահակայ, այլ ի կարծիս մնայ՝ վասն ոչ առնելոյ նմա ի գիրս իւր յիշատակ Մովսիսի Խորենացւոյ՝ որ զնմանէ ըստ կարգի պատմեաց»³: Լամբրոնացւոյն վկայութիւնը ծանրակշիռ է հոս: Նա ձեռքին տակ ունէր հայրապետանոցին ամենէն հարազատ ու թանկագին ձեռագիրները. ազգասէր էր միանգամայն և գիտուն, և ինքը կը ժխտէ տեսլեան գոյութիւնը Խորենացւոյն պատմութեան մէջ: Ս. Ներսէսի տեսած ձեւ

1. S. Migne, P. G. հտր. 127, էջ 884-902, ուր յետոյ լատ. թրգմ. ալ կայ, Հմմտ. նաեւ Gallandi, Bibl. Patr. հտր. Ժ. Cambes: (Le-Quien, Oriens Christianus) ամենէն վերջ եղած է նաեւ հայ թարգմանութիւնը:

2. Տես «Բզմիկ», 1904, էջ 119-26 և 157-65.

3. Տես Հ. Բ. Տաշեան, Մայր Յուշ. Հայ. Զեռ. էջ 333, Գր. Խալատ. «Ղ. Գ. Փրպ. և Գործք Իւր», էջ 122, «Բազմավէպ», 1905, էջ 28:

ռազիրը՝ մեր ունեցած ու հրատարակած ներքն աւելի հին, աւելի ընտիր և աւելի կատարեալ էր. ասոր վրայ կարծեմ ոչ ոք պիտի համարձակի վիճիլ: Անոր մէջ, Ժ. դարուն, տեսիլք դեռ չէր յիշուած. ուրեմն, մեր այսօրուան օրինակներուն մէջ եկամուտ է, օտար ձեռք մը աւելցուցեր է զայն Խորենացւոյն վրայ: Չենք կրնար ըսել, թէ՛ Ղ. Փարպեցւոյն պատմութեան մէջ կար. որովհետեւ եթէ ըլլար՝ Լամբրոնացւոյն պէս գիտուն մէկը պիտի գիտնար: Եւ արդարեւ,

Ղ. Փարպեցին եւս կ'անգիտանայ Տեսիլքը: Որովհետեւ, 129 էջի մէջ (տպ. 1891) Վարազվադան Սիւնւոյն և յետոյ Վասակայ և այլոց ուրացութիւնը պատմելով՝ կ'ըսէ, թէ՛ կատարուեցաւ իրենց վրայ Ս. Գրիգորի տեսիլքին գուշակութիւնը: Բայց այդ միեւնոյն անձանց ուրացութիւնը կը գտնենք նաեւ Ս. Սահակայ մարգարէութեան մէջ գուշակուած: Ըսել է, ուրեմն, 129 էջին հեղինակը, 108-9ի մէջ գրուածներուն տեղեակ չէ: Եթէ Սահակայ տեսիլքին հեղինակն ալ Ղազար ըլլար՝ 129 էջով՝ ասոր անունն ալ անպատճառ պիտի դնէր: Հետեւաբար Փարպեցին բոլորովին անձանօթ է իրեն գրչին վերագրուած Տեսլեան:

Սերէոս, եօթներորդ դարուն, իր պատմութեան մէջ Հայոց թագաւորութեան անկումը կը նշանակէ «Յամին երկրորդի Յազկերտի... բարձաւ թագաւորութիւնն Հայոց՝ որ տեւեաց ամս ԴԵ=405: Նոյն հեղինակը, Արարացւոց տիրապետութեան ծագումն, և ազգիս անոնց ձեռքն կրած աղէտները գրելով, Ս. Գրքի «Զեռ նորա յամենեսեան, և ամենեցուն ձեռք ի նա» կանխագուշակութիւնը կը յիշեցնէ: Եթէ իր օրով Ս. Սահակայ տեսիլքը ծանօթ ըլլար, այդ երկու պարագայից մէջ ալ պիտի յիշատակէր զայն: Նախ պիտի յիշեցնէր զայն ընթերցողին՝ իբր Արշակունի գահին անկման վրայ եղած մարգարէութիւն մը. երկրորդ դէպքին մէջ՝ «պղծութիւն անապատի» բացատրութիւնը պիտի ակնարկէր, և ոչ թէ Ծննդոց գրքին

խօսքը: Ուրեմն, ասկից կը հետեւի թէ Սերէոսի ծանօթ չէր այդ Տեսիլքը:

Ղեւոնդ իր պատմագրութեան մէջ (էջ 173-176) կը մերժէ այդ տեսիլքը իբր սուտ և մոլեկան մոնազի մը գործ: Այս մասին քիչ մը վերջ:

Յովհաննէս Զ. կթղ. Թ-Ժ դարուն իր պատմութեան Ժ. գլուխին մէջ՝ կը գրէ. «Ի վախճանելն Վաւապ» և փոխանակ նորա Յազկերտի որդւոյ նորա թագաւորել, ապա սուրբն Սահակ հիւանդացեալ ի հիւանդութեան մեծ՝ առ Քրիստոս վերափոխի ի Բագրաւան»: Տեսիլքի մասին և ոչ խօսք մը: Հեղինակիս լուծիւնը մեծ նշանակութիւն ունի: Խորենացւոյն հետեւելով՝ Ս. Սահակայ մասին հաւատարմաբար ամէն բան պատմեր է. եթէ իր օրով այսպիսի աւանդութիւն մը՝ բերանացի կամ գրաւոր՝ գոյութիւն ունենար, անպատճառ պիտի յիշէր զայն և պէտք էր յիշել:

Նոյնպէս Ժ. գլուխին մէջ, ուր Հազարացւոց ծագումն և Հայոց անոնցմէ կրած նեղութիւնները կը սկսի պատմել Ս. Սահակայ նախագուշակութեան մը իրականացումը չի տեսներ անոր մէջ:

Դարձեալ, այս միեւնոյն հեղինակէն յայտնի կերպով կը հետեւի, որ տեսիլքը դեռ իր օրով, գէթ Հայոց մէջ՝ ծանօթ չէր: Իր պատմութեան գլ. Ծ. 894 թւականի ատենները, մէջ կը բերէ՝ իւր, Նիկողայոս Կ. Պոլսի պատրիարքին և Վասիլ թողը՝ Կոստանդին Պերսերուժէնին իրարու գրած փոխադարձ ընդարձակ նամակները: Սակայն տեսիլքի մասին ոչ մի ակնարկութիւն: Եթէ արդարեւ այն ծանօթ ըլլար Հայոց, անհրաժեշտ կերպով երբեք ալ իրարու պիտի յիշեցնէին զայն: Կայսրը նախ պիտի յիշատակէր զայն՝ ցուցնելով իր Հայոց հետ ունեցած ատրամադրութիւնը: Նոյնպէս պատրիարքը պիտի ակնարկէր զայն՝ որպէս զի եկեղեցական միութեան յորդորէր զՀայս: Եւ վերջապէս տառապեալ Յովհ. Զ. կաթողիկոսը անպատճառ այդ տեսիլքով Արշակունի գահուն վերականգնումը կայսեր

միտքը պիտի ձգէր, որպէս զի կարեկցու-
թիւնը շարժէր իր բուն ազգին վրայ, և
զինքն ու իր ժողովուրդը՝ արարական
դառն լուծէն ազատէր: Այսու հանդերձ,
տեսիլքի նկատմամբ, ինչպէս ըսի, և ոչ
իսկ հեռաւոր ակնարկութիւն մ'անգամ:
Նշան է, ուրեմն, որ այսպիսի բան տա-
կաւին ծանօթ չէր, զոնէ Հայոց:

Թովմա Արծրունի, աս ալ ժ դարուն,
Տեսիլքը կը յիշատակէ ոչ եթէ այժմու
Խորենացւոյն հակիրճ ձեւով, այլ ճիշտ
միեւնոյն երեւոյթներով, ինչպէս որ կը
գտնենք զայն այժմ Ղ. Փարպեցւոյն ըով:
Սակայն այդ գրքին ձեռք խառնուած է
ԺԳ-ԺԿ դարու հեղինակէ մը, որ պատ-
մութիւնը կը շարունակէ մինչեւ 226 =
1326 թուականը (տ. էջ 365), և 353
էջով՝ նոյն մանրամասնութեամբ կը կրկնէ
տեսիլքը, զայն կատարուած հռչակելով
Դաւիթ կթղկս. Արծրունւոյն վրայ: Ար-
դէն պատմութեան ընթացքին՝ շատ մ'ան-
հարազատ նախադասութեանց կը հանդի-
պինք: Ուստի ապահովապէս կրնանք ըսել,
թէ տեսիլքն ալ եկամուտ է վերջին հե-
ղինակին կողմանէ: Թ. Արծրունին ուրեմն
չի կրնար գրած ըլլալ զայն, քանի որ
իր ժամանակակիցն ալ, Յովհ. Զ. կթղկ.
բոլորովին կ'անգիտանայ անոր գոյու-
թիւնը: Հետեւաբար, մինչեւ ժ. դար՝ տե-
սիլքը մեր մատենագրաց անծանօթ է:
Առաջին անգամ Արծրունիէն յիշուած կը
գտնենք՝ բայց ան ալ շատ կասկածելի
կերպով: Հետագայ հեղինակները կը ճանչ-
նան զայն իբր ծանօթ բան, և ամէն ոք՝
ըստ կամս՝ զայն իր անձին կը յարմարցնէ:
Նոր բանասէրներէն, նախ Գրիգոր Խա-
լաթեանց, իր վերեւ յիշեալ գրութեան

մէջ՝ (էջ 125) պաշտպանեց, թէ՛ Տեսիլքը
ժ. դարէն առաջ ծանօթ չէր. թերեւս բե-
րանացի աւանդութիւն մը կար մինչեւ ժ.Բ
դար, զոր յետոյ Ղ. Փարպեցւոյն պատ-
մութեան վրայ բարդեցին:

Հ. Ղ. Ալիշան, իր Հայապատումին
(հտր. Ա. էջ 141) ծանօթութեամբ մը
Տեսիլքի մասին կը գրէ. «Հարազատու-
թիւնն և առաջին գրողն՝ երկար քննու-
թեանց տակ ինկած է» . սակայն երբ,
ուր, որմէ՞ — Բայց ամենէն աւելի զի-
տուն և հմտալից կերպով գրեց այս նիւթի
վրայ մեր բարեյիշատակ նահատակը
(1915), ամենափայլ ու կտրիճ հանճարը,
և յաւէտ ողբացեալ ծաղկատի վարդա-
պետը՝ Հ. Կարապետ Տէր — Սահակեան:
«Բազմավէպ»-ի երկու յօդուածներով
(1905, էջ 28 և 134), ճարտար գրչով
և շատ համոզիչ տրամաբանութեամբ կը
ցուցնէ, թէ Տեսիլքն իբրեւ դիպր՝ հնուց
գոյութիւն ունէր, բայց այժմեան ձեւը՝
Փոտ տուած է վասիլ Մակեդոնացի Ար-
շակունին սիրաշահելու համար, և Կ.
Պոլսի պատրիարքական աթոռը վերստին
ձեռք ձգելու դիտմամբ: Առ այս եղած
պատճառաբանութիւնները եւ տեսիլքին
բացատրութիւնն ու Հայկազն կայսեր
պատշաճեցումը, ժամանակին ու զիպաց
կէտ առ կէտ յարմարութիւնը, իրօք հրա-
շալի են և ամենայաջող, և ուրիշ դիտու-
թեան զժուարաւ տեղի կու տան:
Յաջորդ տողերովս սոյն կարծիքը հաս-
տատելէս զատ՝ պիտի ջանամ աւելի լու-
սաբանել, ճշդել և ստուգել Տեսիլքին հե-
ղինակը և խմբագրութիւնները: Եւ այսու
պարզած կ'ըլլամ իմ կարծիքս:

(Շար.)

Հ. ԳՐԻԳՈՐ ՄԱՐԳՍԵԱՆ

Ինքնեցողաց դիւրութեան համար, համեմատած օրինակներուս
տղագիր անունները անա կը բացատրեմ.

Ա.Բ. Ժժ = ըսել է վ. հնետի առաջին կամ երկրորդ ձեռագիրը. — Ա. — Հ. Ղ. Ալիշանի բաղդատած
օրինակը. — Ս.Բ. = Սոփերը Հայկ. հտ. Բ, էջ 45-67. — Ա. Բ. Գ. տպ. = վ. հնետի Առաջին, կամ
Երկրորդ, կամ Երրորդ տպագրութիւնը (1793, 1873, 1891). — Տ.Գ. = Տ.Գրիգոր տպ. (1904). — Զ.Մ. = Հ. Մ.
Զամէկանի պատմութեան Գ. հտր. վերջին էջերը. — Ա.Գ.Թ. = Ա.Գաթանգեղոսի Զ. տպ. 1930.

ՏԵՍԻԼ՝ ՍԱՀԱԿԱՅ ՊԱՐԹԵԻԻ

Արդ ունկնդիր լերուք ինձ մտադիւրութեամբ
ամենայն բաղմունքիւն ժողովրդոցդ՝ և պատմե-
ցից՝ ձեզ: Յառաջ քան զբաղում ամս խոր-
հուրդք անմխիթար նեղէին զիս՝ զի ոչ եղև
իմ³ արու զաւակ, անգագար զմտաւ ամեւով
և աղաչելով զԱստուած շնորհէլ ինձ որդի՝ որ-
պէս և իմոց նախնեաց որ յառաջ քան զիս
էին ամուսնացեալք վասն որդեծնութեան: Եւ
քանզի վերակացոյրիւն⁴ հզօրին առ իւրա-
քանչիւր ոք արդար է և ճանաչող քան զոր
մէք իմանամք և խորհմք և խնդրեմք: Եւ ես
ի մեծի հինգշաբթոյն ի զատկի աղուհացիցն
ի հսկման երեկոյն պաշտամանն ի սրբոյ և ի
մեղսաբաւէ խորհրդոյ կենարարին ճաշակեալ՝
այլ բնաւ ամենեւին չեւ ինչ ձաղակալ բայց
հաց և աղ և ջուր, ըստ կանոնի մեծի սուրբ
Ժողովոյն ՅԺԸ կայսկոպոսացն ոքք ի Նիկիա
այսպիսի սահմանաւ կանոնադրեալ⁵ հաստա-
տեցին, զորոց կանոնադրութիւն հաստատեաց
Հոգին Սուրբ: Եւ կատարեալ իմ զկանոնն
յերկարման առաջին գործողիցն⁶, և դառք
պաշտօնէիցն ընդ նոսէն ծանր ներհմամք ի
սաստկութենէ բաղմոքեաց տքնութեան⁷ որպէս
կիսամեռք շինեին⁸, որոց զաւուրս քառամոր-
դացն ուժգին պաճօք և անգագար աղօթիւք
զցայդ եւ զցերեկ հանեալ էր յաղօթմ⁹. և
մանաւանդ ի մեծի շաբթոյն՝ առաւել եւս
յաւելուածովք զնոյն աճեցուցանել փութային

ուշադրեալք ուրախալից վաստակօք հասանել
վարձուցն հասունցման: Եւ լոյս ճրագացն և
կանթեղացն՝ առաւել եւս տոյրեալ¹⁰ բորբո-
քիւր: Եւ ընթացողն կամաւ յերկարէր զկար-
դացումն՝ յաղաքս ստկաւ մի հոգի¹¹ առնլոյ, և
բաւելոյ պաշտօնէիցն առաջարկութեան կանո-
նին: Մնային և բաղմունքիւն ժողովրդեանն ժողո-
վելոյ ըստ սովորութեանն ի պաշտօն գիշերոյն:
Քանզի յորդոր կամօք¹² փափաքէր իւրաքանչիւր
ոք, այր և կին՝ առհասարակ ժամանել արթնու-
թեամբ ի պաշտօնն¹³ վասն փրկութեան ան-
ձանց: Նոսէի և ես մերձ առ¹⁴ սեղանն Աս-
տուծոյ, ի սուրբ եկեղեցւոյն՝ ի Վաղարշապատ
քաղաքի:

ՏԵՍԻԼ ՄԱՐԳԱՐԵՈՒԹԵԱՆ¹⁵ ՍՐԲՈՅՆ
ԻՍԱՀԱԿԱՅ ՊԱՐԹԵԻԻ Հայոց հայրապե-
տի¹⁶ գոր կուս յԱրարատ¹⁷ գաւառի, ի Վա-
ղարշապատ քաղաքի, յորժամ նստեր ի սուրբ
եկեղեցւոյն՝ ի վերայ բեմի, մերձ առ սե-
ղանն Աստուծոյ՝ ի սուրբ կարողիկէին: Աոյ
գրեցոյք գտեալիդ, որ եմ քանք Հօր, և Յի-
սուսի Աստուծոյ, և Հոշոյն սրբոյ՝ սեռա-
կաւս¹⁸ գրեալ ի քարտիսի:

Եւ ահա յանկարծակի բացաւ¹⁹ հաստատու-
թիւն երկնից, ընդ որ ծագեաց լոյս²⁰ սաստիկ,
և ելից զամենայն երևու²¹ երկրի: Եւ կանգնեալ
երեւեցաւ ինձ յերկրի բեմ՝ չորեքկուսի ամ-
պեղէն²², որոյ բարձրութիւն տարածեալ ընդ
զամենայն երկիր: Եւ ի վերայ բեմին երեւէր

1. Ալ. «Յաղագս ի հարկէ պատմելոյ գտնելն սըր-
բոյն Սահակայ». միւս բոլոր ծծ. և տպ. օր. վեր-
նագիր չունին.
2. Ագթ. էջ 545, տող՝ 23-24.
3. Բոլոր օրինակներում մէջ կը պակսի «զի ոչ
եղև ինձ արու զաւակ»:
4. Ա. Բ. ծծ. Ա. Բ. Գ. տպ. Տփղ. տպ. Ալ. օր.
«Մատակարարումն». Սփ. «Մատակարարութիւն»:
5. Ա. Ժ. Ա. Բ. Գ. Տփղ. տպ. «կանոնադրել... կա-
նոնադրութիւն». — Բ. Ժ. Սփ. «կանոնադրեալ... կանո-
նադրեալ... — գրութիւն»:
6. Ա. Բ. ծծ. Սփ. Տփղ. մոյն. — Ալ. օր. Բ. տպ.
«զբուլայ». — Գ. տպ. «զորբուլայ»:
7. Ագթ. էջ 546, տող՝ 14.
8. Բոլոր ծծ. և տպ. «եղէն»:
9. Ա. Բ. ծծ. Ա. տպ. Սփ. մոյն. — Ալ. օր. Բ. Գ.
Տփղ. տպ. չիք «յաղթմ»:
10. Ա. Բ. ծծ. Ալ. օր. Բ. Գ. Տփղ. տպ. «Առա-
ւել եւս տոյրեալ բորբոքէր». Սփ. (չ. եւ). — Ա. տպ.
մոյն.

11. Ա. Բ. ծծ. Ա. տպ. «ոյժ առնլոյ». Ալ. Սփ. Բ.
Գ. Տփղ. տպ. «Առնլոյ ոգի»:
12. Ա. Բ. ծծ. Ալ. Սփ. Ա. Բ. Գ. Տփղ. տպ. «կամաւորութեամբ»:
13. Ա. Բ. ծծ. Ալ. Սփ. Ա. Բ. Գ. Տփղ. տպ. միայն «Արթնութեամբ անձ. փրկ.»:
14. Բոլոր ծծ. և տպ. մոյնպէս. միայն Ա. Ժ.
ունի «մերձ»:
15. Ա. Բ. ծծ. Ալ. Ա. Տփղ. տպ. չիք «մար-
դաբութեան». իսկ Սփ. Բ. Գ. տպ. այդ վերնա-
գիրը չունի.
16. Ա. Բ. ծծ. Ալ. Ա. Տփղ. տպ. չիք «Հայոց
հայրապետի»:
17. Նոյնք՝ չիք «յԱրարատ գաւառի»:
18. Նոյնք՝ չունին «սեռական գրեալ ի քարտիսի»:
19. Ագթ. էջ 547, տող՝ 6.
20. Ագթ. էջ 548, տող՝ 3.
21. Սփ. մոյն. Ալ. «զերեսս ամ. երկրի». Ա. Բ. ծծ.
Ա. Բ. Գ. Տփղ. տպ. «ամ. երկիր»:
22. Ագթ. էջ 549, տող՝ 15-16.

յայտնութիւն մեծ, ոչ միայն յառաջիկայիս՝
այլ և առ յապա յամենայն⁸⁶ մինչեւ ի վախճան
աշխարհին⁸⁷ որ լինելոց են, ծանոյց քեզ⁸⁸ և ա-
մենայն հաւատացելոց ի բան նորա. որպէս ճշմա-
րիտ նախնոյն քո առնն Աստուծոյ⁸⁹ սրբոյն Գրի-
գորի, իսկ քեզ՝ մինչեւ ի կատարած⁹⁰ աշխարհիս,
որ ինչ միանգամ⁹¹ լինելոց է՝ եցոյց զամենայն:
Եւ արդ լո՛ւր և պատմեցից քեզ զմեկնութիւն

մեծի յայտնութեան⁹², որպէս և հրամայեցաւ
ինձ ի վերին զօրութեանէն ցոյցանել քեզ⁹³ զա-
մենայն: Եւ դու ունկնդիր լի բազում զգու-
շութեամբ, և գրեալ ի տախտակս սրտի քո ան-
մուաց, զոր ի մագաղաթի⁹⁴ գրուեալ թողցես
հաւատացեալ Ժողովրդոց և անսխալ մինչեւ ի
վախճան աշխարհի⁹⁵:

(Հարունակի)

86. Ալ. Սփ. Բ. Գ. Տփղ. տալս. կը յաւելումն
«Իրաց որ»:

87. Ալ. Բ. Գ. տալս. «ժամանակի»:

88. Ալ. Սփ: «Բե»:

89. Ա. Ժ. Ա. տալս. չ. «Առն Աստուծոյ»: Ալ. «Ճշմր.
ան նիւն. քմ. առնն Աստուծոյ»:

90. Ալ. Սփ. «կատարումն»:

91. Նոյնը՝ չումիմ «միանգամայն»:

92. Ա. Բ. Ժ. Ա. տալս. չ. «Մեծի յայտնութեան»:

93. Նոյնը՝ չիք «ի վերին զօր. ցոյցանել (Ալ. Ժա-
նուց.) քեզ զամեն»:

94. Նոյնը՝ «Եւ զրով»:

95. Զմ. Ալ. Բ. Գ. տալս. «ժամանակի»:

ԹՈՒՆՈՎԱՅԻ ԱՆՀԵՏԱՅԱԾ ՀԱՅ ԳԱՂՈՒԹԻՆ ՆՇԽԱՐՆԵՐ

Թռնովայի Ս. Աստուածածնի աւերակ եկեղեցոյն գաւիքը գտնուող
տապաւնագիրներուն պատմեցնելը

Առաջին

Այս է տապան համգաստեան մահտեսի Գրիգորի
դուստր վարվառիմէ որ համգեաւ ի Տէր ՌժՅՐ
(1709):

Երկրորդ տապանաքար մարմարեայ

Նայեցարուք ծնունդը երկրի
ի սոյն տապան որ տեսանի
Մարմին տիկնոջ հիւրի խանի
էր կողակից սա Գրիգորի
Մահտեսույ բարեպաշտի
Տեղեաւ բնիկ Դռնովացի
Ընդ առն իւրում սա կենակցի
Պարկեշտ վարուք ... տարի
Ամուսնացոյց դուստր և որդի
Եւ վախճանի հայոց թուի ՌժՅԹ (1730)
Որք համգեղիք տուք զողորմի:

Երրորդ տապանաքար մարմարեայ

Անցաւորք ցամապարհի
Տեսէք շիրիմս այս գովելի
Քանգի է սա դուռ տապանի
Արդար մանկան Արքանամի
Սնեալ սրբոյ աստիճանի
Եւ ընթերցող մոր Սիոնի
Որ է որդի սա Գրիգորի
հեզ մահտեսույ և իշխանի

Սուրբ հաւատով առ տէր փոխի
Մանուկ տիօք ըստ հասակի
Թողեալ կսկիծ իր ծնողի
Տարակուսեալ կեցօք շրջի
Անմխիթար վերա երկրի:

Չորրորդ տապանաքար մարմարեայ

Հարք մարք համգեղիք շիրմիս
Ափսոսացէք զխեղճուկ գերիս
Մահմ գրաւեց զիս եղկելիս
Եղ ի բամտի այս տապանիս
Շատ խեղճ տարիմ լի հիւրիս
Երեք տասնամեայ կուսիս
Եւ հօրն իմոյ մահտեսիս
Որոյ անունն է Գրիգորիս
Եւ մօրն իմոյ հուրի խանիս
Եւ քնն իմոյ Մարիամիս
Հայոց մեծաց թուականիս
Համրիս որք համգեղիք արուք զողորմիս
ՌժՀիս (1721):

Հաւաքեց Ս. ՏԵՐՏԵՐԵԱՆ

Սոյն հին եկեղեցին դժբախտաբար 50 տարի է ի վեր
փակուած է և այսօր չորս պատերը միայն կանգուն կը
մնան. տապանագիրներու քարերը շեղ մարմար լինե-
լուն համար պուլկար կառավարութիւնը զանոնք վեր-
ցուցած է և կը պահպանէ իրեն հնութիւն:

ՄԻՋՆԱԴԱՐՆԱՆ ՀԱՅ ՏԱՂԱՍԱՑՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

ԱՇՈՒՂ ԱԷՖԷՐ

Ահա ուրիշ անծանօթ Աշուղ մը, որուն
մասին ոչ մէկ կենսագրական ծանօթու-
թիւն ունինք, և մուրալն ալ անկարելի
լուծեամբ միայն կը վարձատրուի հայ
ուսումնասիրութեան: Առջին անգամ Պ.
Զօպանեան հրատարակած է անոր մէկ
տաղը «Հայ էջեր»-ու մէջ¹: Այս առթիւ
ան կ'ըսէ. «Սէֆէրի տաղը (5-6) աւելի
եւս խառնակ է և անհաւասար. բայց
պանդխտութեան ցաւը երգող ինչ զմայ-
լելի քանի մը տողեր կան հոն՝ գրեթէ
համբաւաւոր «Կռունկ»-ին հաւասար»²:
Պ. Զօպանեան կը հրատարակէ Սէֆէրի
այդ տաղը՝ Էջմիածնի թիւ 1999 ձեռա-
գրէն առնելով: Իմ Տաղարանիս (գրուած
1681ին) մէջ ալ կայ այս տաղիս օրի-
նակը, բիշ մը տարբեր և Պ. Զօպանեանի
հրատարակութեան մէկ տուն աւելի:
Ահա հոս կը հրատարակեմ իմ օրինակս:

ՏԱՂ ՎԱՍՆ ՀՈԳՈՅ

Ընգակ ու մալն եղեր մարդուն դէմ չի գար,
Հոգուս առնողն որ գայ ես ինտոր անեմ:
Ինձի համար աւտարն զհոգին չի տար.
Հոգուս առնողն որ գայ ես ինտոր անեմ:

Ղարխալութեան տեղըն սըրտիկըս խոցէ,
Հիւրնդուկ պատկեր եմ դըռնակս ի գոցէ:
Մարմինըս բնորնկեր կըրակ ու բոց է,
Հոգուս առնողն որ գայ ես ինտոր անեմ:

Կըտրիճին զըլուխն նէչէ հալ կուգայ,
Զունիմ հայր և մայր որ նըստի զիս հոգայ,
Հաւասով լաթ արի, աւր մի չհահայ,
Հոգուս առնողն որ գայ ես ինտոր անեմ:

Իմ հայրն ու մայրն երկու ձեռս է որ կու բանի,
Ոչ հանգիստ հաց կերայ, 'և ոչ քունըս կու տանի,
Դիմացըս կայներ է գէտ ըզհարամի,
Հոգուս առնողն որ գայ ես ինտոր անեմ:

Գըրողն որ կուգայ չի աներ յիմաց,
Տեսեր ես կայներ է յաչիցըդ դիմաց,
Խելքս ի զլուխըս չըկայ հոգի չմընաց,
Հոգուս առնողն որ գայ ես ինտոր անեմ:
Հիւրնդուկ եմ քովս է նըստեր պէքճի³,
Աճալ խամսք չի անրնի որ գըտնեմ տիլէքճի⁴,
Հալայ⁵ զըրաւդ մարիկըդ չհանգչի,
Հոգուս առնողն որ գայ ես ինտոր անեմ:

Սըրտիկըս կուլայ հարիկ մարիկ կու կանչէ,
Գոհութիւն որ պառկած տեղիկըս խան չէ,
Կըտրիճուրաց մէջ լինալու բան չէ,
Հոգուս առնողն որ գայ ես ինտոր անեմ:

Զեւկիւիկս յափուց էս դատէհիկս⁶ առէք,
Ինչու չէք ի լար զիս, քանի կու լըռէք,
Գիտեմ որ զիս այլ կու տանիք թաղէք,
Հոգուս առնողն որ գայ ես ինտոր անեմ:

Ես որ մօրէս եղայ մեռնելու համար,
Լոյս աշխարհիս վերայ կապեր է կամար,
Սէֆէրըն կ'ասէ սուրբ աստուածամայր,
Հոգուս առնողն որ գայ ես ինտոր անեմ:

Իմ տաղարանիս մէջ ասկէ զատ կան
Սէֆէրի երկու ուրիշ տաղերը, որոնք կար-
ծեմ առաջին անգամ ըլլալով կը հրա-
տարակեմ:

ՏԱՂ ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ

Հրեշտակին բարեւ բերին,
Աստուածածին մէյրէմ անայէ,
Քրիստոս քեզ կու բնակի,
Զապալմայ օնտան եանի:

Աստուածածին խիտ արմընցաւ,
Գաբրիէլ հրեշտակին հարցաւ,
Թէ զիս ստեղծողն ի յիս դարձաւ,
Շեւքուր էլլէտի սուր հանէ:

1. «Հայ էջեր». էջ 21. - 2. Անդ՝ էջ ԺԸ. - 3.
Պահապան. - 4. Մուրացկան. - 5. Ինչալահ = տար
Աստուած. - 6. Բաժակ: